ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 12.05.2026թ. ժամը 17:30
ավարտ՝ 19.05.2026թ. ժամը 17:30

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգման բաժնի ճանապարհների պահպանման աշխատանքների տարածքային ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Կարապետ Հյուսիսյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգման բաժնի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգող տարածքային ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Վահրամ Նորեկյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Լաուրա Գևորգյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման աշխատանքների համակարգման բաժնի ճանապարհների պահպանման աշխատանքների տարածքային ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Թադևոս Կիլիչյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

Օրակարգ

«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

1. Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 7-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ2/2498/02/26 քաղաքացիական գործով 27.04.2026թ. վճիռը և ՏԿԵ նախարարության իրավաբանական վարչության պետի թիվ Ն/21.2/1945-2026 զեկուցագիրը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 12.05.2026թ. հանձնարարականը՝ գնահատող հանձնաժողովը 12.05.2026 թվականին՝ ժամը 17:30–ին, վերսկսեց իր աշխատանքները.

Նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ2/2498/02/26 քաղաքացիական գործով 27.04.2026թ. վճիռը (այսուհետ՝ Վճիռ), ՀՀ քննչական կոմիտեի 04.03.2026թ. թիվ 07/07.1/78011-2026 և ՀՀ պետական վերահսկողական ծառայության 24.03.2026թ. թիվ Ե/438-26 գրությունները:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Հիմք ընդունելով Վճիռը, ՀՀ քննչական կոմիտեի 04.03.2026թ. թիվ 07/07.1/78011-2026 և ՀՀ պետական վերահսկողական ծառայության 24.03.2026թ. թիվ Ե/438-26 գրությունները, միաժամանակ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ կետի դրույթներով ստուգել «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

2) Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակել իրավասու մարմնի կողմից գրավոր եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 17:00-ին:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 4 դեմ-0

19.05.2026թ. ժամը 17:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

2. Տեղեկություն՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ստացված տվյալների մասին

2.1 Հանձնաժողովն ուսումնասիրեց իրավասու մարմնի կողմից 18.05.2026թ. N 07/07/189485-2026 գրությամբ ստացված տվյալները և ընդունեց ի գիտություն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի, 67-րդ, 119-րդ և 121-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի 04.03.2026թ. թիվ 07/07.1/78011-2026, 18.05.2026թ. N 07/07/189485-2026 և ՀՀ պետական վերահսկողական ծառայության 24.03.2026թ. թիվ Ե/438-26 գրությունները «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը մերժել:

3.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով՝ «ԹԻ ԷՄ ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները:

3.3 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչել «Քյավառ սերվիս» ՍՊԸ-ին:

3.4 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

3.5 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

3.6 Հիմք ընդունելով Ընթացակարգի Հրավերով սահմանված պայմանը՝ մինչև պայմանագիր կնքելը, ընտրված մասնակցին ներկայացնել Հրավերով սահմանված մեքենա-սարքավորումների նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ:

3.7 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Ընտրված մասնակցի կողմից Հրավերով սահմանված փաստաթղթերի ներկայացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 3 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Կարապետ Հյուսիսյան**	.....
	Վահրամ Նորեկյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
	Թադևոս Կիլիչյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....